

Ձեր Հեռախօսային Ծառայութեան առնչութեամբ Օգնութիւն խնդրելու կարգ մը ձեւեր.-

- Կապուեցէք ձեր հեռախօսի
ընկերութեան հետ.
- Կապուեցէք CPUC-ի հետ.
- Կապուեցէք FCC-ի հետ.



Եթէ հեռախօսի ընկերութեանդ հետ հարցի մը
կամ ալ վիճելի վճարում մը լուծելու գծով
օժանդակութեան պէտք ունիք՝ նախ պէտք է
կապուիք ընկերութեան հետ: Եթէ ձեր հարցը չէ
լուծուած, կրնաք գանգատ ներկայացնել անլայն՝
www.calphoneinfo.com, կամ հեռաձայնել
Սպարողների Հարցերու Մասնաճիւղ եւ
Հանրային Սպասարկման Խարդախութիւն
(Consumer Affairs Branch and Utility Fraud
Hotline)-ի գծով՝ **1(800) 649-7570**



CPUC

Who to Complain to? – May 2012—Armenian

Որուն կրնաք Գանգատիլ

CALIFORNIA
PUBLIC
UTILITIES
COMMISSION





Հեռախօսի ընկերութենէն օժանդակութիւն խնդրէ անմիջապէս որ խնդիր ունենաս

Եթէ հառախօսի ծառայութեանը կամ անսավճարի առնչութեամբ խնդիր ունիս՝ անմիջապէս կապ հաստատէ ընկերութեան հետ զայն լուծելու համար:

- Զանքահարէ ընկերութեան ձրի համարին կամ ալ եթէ կարելի է, անոր յաճախորդներու յատուկ կայքէջը այցելէ:
- Եթէ չկարողացար խնդիրը լուծել ընկերութեան յաճախորդներու յատուկ բաժանմունքին հետ՝ պահանջէ խօսիլ պատասխանատուի մը հետ, որը աւելի ուժ ունի հարցերը լուծելու:

Որուն կրնաք Գանգատիլ

CPUC-ի օգնութեան դիմէ երբ ընկերութիւնը չուզէ օգնել քեզ:

Եթէ ընկերութեան հետ խոսեցար ու այդ չօգնէց հարցի լուծման կրնաս CPUC-ի յաճախորդի բաժանմունքին (Consumer Affairs) դիմել:

CPUC-ին կրնայ քեզ օգնել ծառայութեան կամ վճարման հարցերով, ներառեալ ծախսեր՝ որոնց գծով դուն համաձայնութիւն տուած չես, կամ ընկերութիւնը փոխանցուած է այլի՝ առանց քու համաձայնութեանդ: Կրնաս CPUC-ին դիմել հեռախօսով, համացանցով, կամ փոստով:

Հեռաձայնով՝	1-800-649-7570
Համացանցով:	https://ia.cpuc.ca.gov/cimsapp/
Փոստով:	CPUC Consumer Affairs Branch 505 Van Ness Ave. San Francisco, CA 94102

Եթէ CPUC-ն ալ օգտակար չեղաւ կրնաս դիմել այլ կազմակերպութիւններու:

Եթէ CPUC-ն եւ հեռախօսի ընկերութիւնը օգտակար չեղան՝ կրնաս FCC-ին (Federal Communications Commission) դիմել հետեւեալ կերպով՝

Ելեքորոնիք փոստով (e-mail)	fccinfo@fcc.gov
Համացանցով:	www.fcc.gov/cgb/complaints.html
Փոստով:	Federal Communications Commission Consumer & Govt. Affairs Bureau 445 12th Street, SW Washington, D.C. 20554
Ֆաքսով՝	1-866-418-0232
Հեռաձայնով՝	ձայն: 1-888-225-5322 TTY-ով 1-888-835-5322



Իմացիր որ երբեմն քանի մը ռոպէ կը տեւէ անձին հետ կապ հաստատել: Հետեւաբար զանգահարէ այն ժամերուն երբ այլ բանով զբաղ չես:

Պատրաստ եղիր ընկերութեան հետ խօսելէ առաջ: Հաւաքէ բոլոր փաստաթուղթերդ եւ միշտ գրի առ նախապէս ունեցած խօսակցութիւններուդ թուականները, խօսած անձիդ անունը եւ ինչ որ ան համաձայնեցաւ ընել: